ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«01» ....Հունիսի..... 2016 թ. N 5-ա(Յ)

Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի <<Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի <<Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին>> N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետի ա) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-3.1-153) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 31-ի եզրակացությունը և Տ. Գևորգյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Տիգրան Սամվելի Գևորգյանին 2016 թվականի հունիսի 01-ից նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-3.1-153) պաշտոնում՝ լուծելով ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-3.1-153) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2015 թվականի փետրվարի 16-ին կնքված N 2 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ